ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«30» դեկտեմբերի 2024թ. N 110-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 53 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՒՄԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի ապրիլի 12-ի N 518-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 23-րդ և 24-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Երևան քաղաքի Հրաչյա Աճառյան փողոցի N 53 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրի 666 շահառուների (այսուհետ՝ Շահառուներ) կողմից ավտոկայանատեղիների վիճակահանության մասնակցության ապահովման համար ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) գանձապետական ավանդային 900018009812 հաշվին 400,000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի վճարման վերջնաժամկետ սահմանել 2025 թվականի հունվարի 17-ը:
2. Հանրային ծառայողներին բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում 700 ավտոկայանատեղիների վիճակահանությունը մեկնարկել 2025 թվականի հունվարի 21-ին՝ ժամը 10:00-ին:

3. Հանրային ծառայողներին բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում մինչև վիճակահանության կազմակերպումը Շահառուների կողմից ցուցակից դուրս գալու և 400,000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի վերադարձի մասին գրավոր դիմում ներկայացնելու վերջնաժամկետ սահմանել 2025 թվականի հունվարի 20-ը:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Կոմիտեի կայքում պաշտոնական հրապարակման օրվանից:

30.12.2024

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133 Ե.ՎԱՐԴԱՆՅԱՆ